Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2023թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 33530 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 11799 մտից, 9048 ելից, 12683 ներքին:

2023թ-ի ընթացքում ստացվել է 748 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 585 քաղաքացի: 548 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 37-ինը՝ մերժվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 15 քաղաքացի, բոլոր 15 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 17 դիմում է ստացվել, ստացված 17 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 40 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 24 քաղաքացի, 24-ին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 10 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմել են 11 քաղաքացի, դիմած քաղաքացիներից 11-ին էլ տրվել է դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 33 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 13 դիմում: